

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Միծին Նարողեռնի կենաց դեմ եղած դաշտամանուրիւնները :

Կաթոլիկոնի պես մեծ աշխարհակալի մը ամէն հանդիպած դէպքերը հետաքննական ըլլալուն, 1798^էն ինչուան 1815 տարին իրեն անձին դէմ եղած դաւաճանութիւններուն համառօտ պատմութիւնը կը դնենք հոս : Խոնց ամենուն ալ պատճառը մէկ եղած է, այսինքն քաղաքական մոլենախանձ կիրք :

Խնդհանրապէս Կաթոլիկոնի հոգը չէր ու չէր մտածեր որ իր կենացը դէմ դաւաճանութիւններ կրնային ըլլալ : Քաղաքական ոստիկանութիւնը երբոր իր կենաց վրայ եղած վտանգները իրեն ականջը կը հասցընէր, և ինչուան անորոշանհանդարտութեան ձայներն ալ կը հաղորդէր իրեն, ինքը սկզբան ու շաղրութիւն չէր ըներ, ետքը հազիւ մէյ մը մտիկ կը դնէր, ու ամենեին չէր հաւտար լսածներուն . և երբոր յայտնի ապացոյցներ առջեւը կը դնէին, “ Այսէկ աղէկ, կը պատասխանէր, դուք հոգացէք, աս ձեր պաշտօնն է . քաղաքական ոստիկանութեան կը վերաբերի զգուշութիւններ ընելը, ես ժամանակ չունիմ աս տեսակ բաներու հետ զբաղելու , — ” Կատ դիւրին չէ իմ կեանքս վերցընելը ինչպէս որ կը կարծուի, ըստ ինքը անգամ մը Տավու մարածախտին, որ իր կենաց վրայ վախ կը ցուցընէր . ես ամենեին հաստատուն սովորութիւն չունիմ, և ոչ ալ որոշեալ ժամ : իմ աշխատութիւններս միշտ կ'ընդհատին, ու իմ դուրս ելլելու ժամանակս յանկարծական է : Լոյնպէս սեղանի վրայ ամենեին կերակրոյ խտրութիւն չունիմ . երբեմն ասկէ կ'ուտեմ, երբեմն անկէ . երբեմն իմ քովի

պնակէս, երբեմն ամենէն աւելի հեռու եղած պնակէն , :

Պոնաբարդէի հիւպատոսութեան առջի տարին խելմը դաւադրութիւններ եղան իր անձին դէմ . հասարակապետականք էին ասոնք՝ խառն թագաւորականաց, Ա արչաց ժողովքին մտերիմ անձինքներուն, և այլոց հետ : Խմէնանութիւններութեան ելած յանցաւորը՝ իր բանտուելուն երկրորդ օրը կը գրէր Կաթոլիկոնին . “ Տարի մըն է որ քեզի դէմ մեքենայք կը լարուին, ամէն կուսակցութեան մարդիկ կը գտուին մէջը, ամէն մարդ փողոցներու ու ընկերութեանց մէջ անոր վրայ կը խօսին, և զու միայն չես գիտեր, և կամ արհամարհեցիր քեզի եղած ազդարարութիւնները , : Խմիկայ էր միայն Խմէնայինին իր անձին վրայօք ըրած արդարացուցումնը, և իր դատաւորներուն առջել նոյնը կը կրկնէր . “ Խմէն կողմէ դաւաճանութիւններ կ'ըլլան . Ես ինչպէս կրնամաւելի յանցաւորը ըլլալ քան զամէն մարդիկ , :

Խյս առաջին յանցաւորները, որոնք զինուորական մասնաւոր դատաստանով քննուեցան ու դատապարտուեցան, փողոցի դաւաճաններ էին : Խմէնայի, Տէմէրվիլի, ու Պարինոյ լըպրէօնի դաւակցութիւնը բուն գաղղիական դաւաճանութիւն մըն էր . բոլոր աշխարհք գիտէր ընելիքնին : Տէմէրվիլ, որն որ ատենօք հասարակաց առողջութեան խորհրդին պաշտօնատարներէն մէկն եղած էր, բայբէր՝ ամսեան 18^էն եղածին վրայ զայրացած էր . անկէ ետքը Պոնաբարդէ իրեն աչքին առջեւը նոր կեսար մը կ'երենար, և Խուտոսու մը կը փնտուէր . “ Ինչու կ'ուշացուի, կ'ըսէր, աս նոր կեսարը սպաննելու . այսօրուան օրս ամենեին կարօտութիւն չկայ ժողովրդոց բազմութեան, քանի մը քաջասիրտներ բաւական են հայրենիքը ազատելու համար , : — ” Ասպատրաստ եմ, պատասխանեց սպայ մը, և ինձի հետ նաև ապահով անձինքներ

ալ կը գտնամ,, : — “ Շատ լաւ . վա-
զը չէ մէկայն որ Պոնաբարդէ Օֆէրտ
թատրոնը պիտի գայ Ո Հրատեանց ողբեր-
գութեան առաջին հանդիսացուցմանը
ներկայ գտնուելու . հոն գտնուինք ան-
վրէալ մեր բարեկամներովը , ու թող
ջնջուի բռնաւորը,, : Տէմէրվիլ իմաց
տուաւ Ըէրաքքեայ և Արէնայի , որոնք
յուսալից իմացուցին զան իրենց կողմա-
նէ Տիանայի ու Դարեինոյ Լըպրէօնի .
և ասոնց ամէնքն ալ մոքերնին դրած
էին որ բոլորնին մէկտեղ յարձակելով
Արբոլէօնի վրայ՝ բանը դիւրաւ պիտի
լմլնցընէին : Ի՞այց Տէմէրվիլ վախ-
նալով իր աս ընելիք գործողութեան
մեծութենէն՝ կու գայ Պառէրի կը
յայտնէ բանը , որ ան ալ Լան զօրա-
պետին իր բարեկամին կ'իմացընէ : Իսկ
մէկալ սպայն ալ կ'երթայ Պուրիէնի
հետ կը խօսի այս բանիս վրայ , որն որ
առաջին հիւպատոսին քարտուղարն էր .
և անիկայ ալ Ֆուշէի՝ քաղաքական ու-
տիկանութեան պաշտօնէին ձեռքովը
տուաւ սպային ան ապահով անձինքնե-
րը , զորոնք ինքը խոստացեր էր Տէմէր-
վիլ : Այն իրիկունը՝ թատրոնին մէջ
դաւաճանները բռնուեցան իրենց դա-
ւակիցներէն , և այնպիսի անշփոթ ու
անձայն կերպով , որ տեղոյն մէջ եղող-
ները ամեննեին բան մը չիմացան : Ֆու-
շէ միտք ունէր որ առանց պատժելու
յանցաւորները անցընել տար բանը .
բայց չեանալից՝ ամսուն Յեն նոր դաւաճա-
նութիւն մըն ալ դուրս ելլելով , հարկ
եղաւ որ առջիններուն պատժուելովը
օրինակ տրուի ուրիշներուն : Ի՞այս դը-
ժոխային մեքենային դաւակցութեան
վրայ ուրիշ անդամ մը մասնաւոր յօ-
դուածով կ'ուզենք խօսիլ . անոր համար
միայն յիշատակութիւն մը ըրինք հոս
անոր վրան :

1801 տարւոյն , գաղղիացի վտա-
րանդի մը՝ Ոտուսաց դեսպանին հետ ,
որ Արքով կոմսն էր , շատ ծածուկ
տեսութիւններ ընելէն վերջը , եօթը
ամսուան մէջ երեք անգամ դէպ 'ի Ի՞ե-

դրպուրկ Շամբորդութիւն ըրաւ : Ա Եր-
ջին անգամն որ զնաց ան մայրաքաղա-
քը , բռնեցին զինքն ու բանատեցին . քըն-
նուեցան իր թղթերը , և Լցեքսանդր
կայսրը վճռեց որ Ախալերիա աքսորուի
այս լրտեսը : Դաղղիոյ քաղաքական ու-
տիկանութիւնը աս բառին իմաստը
հասկընալու համար ամէն ջանք ըրաւ ,
այլ 'ի զուր . բայց Արբոլէօն լաւ յիշո-
ղութիւն ունենալով , աս գաղղիացւոյն
անունը միտքը պահած էր . և Դիլսի-
դի հաշտութեան ատենը նոյն քաղքին
մէջ Լցեքսանդր կայսրէն անոր վրայ
տեղեկութիւն ուզեց : Ի դարձին Ար-
բոլէօն ըսաւ Ողբանդի զքսին . “ Ա
լցեքսանդր կայսրը զուրցեց ինձի որ
այդ մարդը Ախալերիա խրկեր էր , ո-
րովհետեւ յանձն առեր էր զիս սպան-
նելու ,, :

1808^{են} Ի՞արիզու մէջ լեհացի մը
բռնուեցաւ , որն որ Ի՞ակովաքի կոմս ա-
նուանած էր ինքզինքը . իր թղթերուն
մէջ նամակի մը օրինակ գտնուեցաւ ,
զոր Համապուրկէն Ոտուսաց կայսեր խըր-
կած էր . ասոր մէջ որոշակի խօսքերով
ու պատճառներով կը ցուցընէր որ Ար-
բոլէօնի կենաց դաւաճանութիւն պիտի
ընէ : 1811 տարւոյն՝ ասոր դէմ դաւա-
նայ ու լրտեսութեան ուրիշ ապացոյց-
ներ ալ ելան դուրս . անոր համար զաս
ալ զինուորական մասնաւոր ատեան մը
դաւեց ու հարկ համարեցաւ դաւա-
պարտել 'ի մահ :

Արբոլէօնի անձին դաւաճանք դրտ-
նուեցան նաև Դերմանիոյ մէջ . ոչ
միայն թշնամի հայրենեաց կը կոչեին
զինքը Դերմանացիք , այլնաև ազատու-
թեան . պատանիք ու երիտասարդք ի-
րենց վրկութիւնն ու փառքը Արբոլէօ-
նի կենաց կորստեան վրայ զրեր էին :
Ի՞ուսիոյ մէջ՝ դպրոցները , դրամատե-
ղիներն ու սրճանոցները աս սպանու-
թեանս վրայ միայն կը խօսուէր : Ի՞ակ
ընկերութիւն մըն ալ հաստատուեցաւ ,
որ կ'ըսուէր Ընկերութիւն հրաշանէ , ուր
որ հրացանի նշան առնելու կը թու-
թիւն կ'ընէին՝ այն նպատակաւ որ ապա-
հով մահաբեր հարուածներ կարենան

տալ գերմանական երկրին թշնամոյն՝ Ա, աբովէնի :

Փրետերիկոս Հ թափս անունով պատանին՝ աս գերմանական զայրացած երիտասարդներուն վառվուուն պատկերը իր վրայ կը ներկայացընէ : Իսիկայ լուտերական երիցու մը զաւակ էր . և Կրֆուրդ քաղաքը դեռ աշակերտութեան մէջ էր՝ երբոր աս մտածութիւնն ունեցաւ : Իր կերպարանքը, իր շարժուածքներն ու խօսքերը կը ցուցընէին թէ սրտին մէջ մոլենախանձ կրօնից վրէժինդրութեան հետ խառն քաղաքական նախանձայուզութիւն մը կար : Հ թափս 18 տարուան ու ինը ամսուան էր . քաղցը ու նշանաւոր դէմք մը ունէր, ու խիստ կենդանի աչուըներ : Ի՞ս բառերս՝ Խաղաղութիւն Գերմանիոյ և Առարտած՝ անդադար կը պտըտէին իր բերանը : “ Դիտեմ, կ'ըսէր, որ տանջանքներ պիտի քաշեմ, բայց ես առաջուցմէ յանձն առած եմ զանոնք : Ի՞ս զիշերս ալ՝ Իստուած երեցաւ ինձի, կը զրէր իր հօրը . իրեն կերպարանքը լուսնի նըման էր . ձայն եկաւ ինձի որ կ'ըսէր . Ի՞սաջ գնա . ձեռք զարկած գործոզութեանդ մէջ պիտի յաջողիս դուն, բայց կը մեռնիս , : Ամանք կ'ըսէն թէ զաղտնի ընկերութեան մը անդամ էր Հ թափս, ու վիճակը իրեն ելած էր զԱ, աբովէն սպաննելու . բայց անհիմն բան կ'երեւայ ասիկայ, որովհետեւ իր ցնորեալ խօսքերն ալ միայն կը ցուցընէն որ իր աս մտածութիւնը առածնութեան մէջ ծնած էր : Իր հայրը կը զրէր իրեն . “ Աեր քովը եկուր . քու միտքդ հիւանդացած է : Եկուր, իմամենասիրելի ու ամենաթշուառ զաւակս . իմ ծերութեան օրերուս ասանկ վիշտ մը մի պատճառեր , : Իսայց Հ թափս կը պատասխանէր . “ Ես Իստուծոյ հանդիսական երդումն ըրեր եմաս գործողութիւնն ընելու, յաւիտենական գատապարտութեան պատժուելու պայմանով : Ի՞սալիսի երդմունքէ մը ետքը՝ իմ ծեռքս չէ ետ կենալը , : Հ թափս՝ Ա, աբովէնի Հ էօն սրուն զօրահանդէս ընելու միջոցը քըու-

նուեցաւ . ու ետքը գլխատուեցաւ : Ի՞սիկայ օրինակ մը ուզեցին տալ Դադղիացիք մարդասպանութիւն քարոզողներուն Պերմանիոյ մէջ, որուն ծոցը բազմաթիւ գաղտնի ընկերութիւններ բունած էին :

Դամինիկոս Լ Կինէսդ՝ Լ ա Վահլա պարոնը, որ 18 տարեկան էր, երկրորդ գերմանացի դաւաճանն եղաւ Ա, աբովէնի դէմ : Ա, աբովէն 1806 տարւոյն Պեռլին եղած միջոցը՝ ըսեր էր կրից ժամանակ թէ “ Վա Բրուսիոյ ազնուականներուն՝ կերակուր մուրալ պիտի տամ , : Ի՞ս խօսքը թունալից նետի մը պէս այդ երեքտասանամեայ պատանւոյն սիրտը խոցեց, որուն ազգականները երևելի պաշտօններու վրայ էին Ի՞րուսիոյ ու Վաքսոնիոյ մէջ : Իրեն ատելութիւնը ընդգէմ Դաղղիոյ կայսեր և Դաղղիացւոց իրաւցընէ անլուր բան մըն էր . թէ որ գաղղիական զինուորի մը նշանազգեստը միայն տեսնէր, կատաղութիւնն կու զար վրան : Ի՞արիզեկած ատենը իր անգութ մտածութիւնը ’ի գործ զնելու համար, իրմէ առաջ Կրֆուրդ քաղքէն եկած տեղեկութիւնը հասեր էր հոն ու խմացուցեր էր իր խօսակցութիւններն որ հրապարակաւ ըրած էր նոյն քաղքին մէջ : 1811 ին փետրուարի 8^{ին} բռնուեցաւ ինքը : Ա ըրան գտան վեց զոյգ ատրճանակ . հինգը Ի՞արիզ գնել էր, իսկ վեցերորդը հայրենասիրական յիշատակ մըն էր : Երբոր հարցափորձին ատենը հարցուեցաւ Լ ա Վահլայի՝ թէ ինչ բանի պիտի ծառայեցընէր այսչափ լեցուցած հրազէնք, սկզբան ջանաց որ մնոտի պատճառներով փախուստ տայ, բայց վերջապէս խոստովանեցաւ թէ իրեն նպատակն էր զկայսրը սպաննել : Վակայն որովհետեւ իրեն մահը այնպէս հարկաւոր չէր՝ ինչպէս Հ թափսինը, անոր համար կեանքը շնորհուեցաւ իրեն, և տարին Վ էնսանի դղեակը փակեցին, ուր որ երեք տարի կեցաւ : Երբոր իր հայրենակիցները 1814 ին Ի՞արիզ մտան, զինքն ալազատեցին : 1815 ին սորէն Դաղղիա էր Լ ա Վահլա . նոյն

օրն որ կայսրը երեսփոխանաց սենեկին նիստը պիտի բանար , երիտասարդ մը ()ըինադիր ժողովքին հրապարակին մէջ կառքէն վար իշնալու ատեն՝ կը նըկի վրայ սահեցաւ ինկաւ . աս իյնալու ատենը վառօղի ծրար մը ունենալով զրպանը՝ բռնկեցաւ . այս երիտասարդը նոյն ինքն | ա Այհլա էր : Այս անգամ որքննեցին զինքը , որոշ ու ան-

շփոթ պատասխաններ տալով՝ ամենայն ազդուութեամբ ուրացաւ որ զկայսրը սպաննելու դիտաւորութիւն մը չունէր : Շայց վերջը երբոր վտանգը անցաւ , բոլորովին ետ առաւ ըսածը և յայտնեց որ միայն կայսեր կեանքը վերցընելու համար՝ նորէն Վազգիոյ երկիրը ոտք կոխեր էր : | ա Այհլա իր հայրենիքը մեռաւ :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Գլխաւոր աշխարհագրական գիտերու բուականն ու գտողներուն անունները :

	Տարբե
Կալանտա (գտած է՝ Այտտոտ սկանտինաւիացի հուղկահարը).	861
Լրէնլանտ (Առնալիուն իսլանտացին).	Էբր 970
Վանարեան կղզիք (գենուացի ու կադալոնիացի նաւորդներ).	1345
Վանարեան կղզեաց նուաճումը , Քովչաննես տը Պիեթէնգուր նորման տացւոյն ձեռքով .	1401—1405
Բորդոյ-Վանդոյ (Դրիսդան Ազգ ու Օարդոյ բորդուգալցիները).	1418
Վատեյրա (նոյները).	1419
Վալիտակ Աար (Առնոյ Դրիսդան բորդուգալցին).	1440
Վարեան կղզիք (Առնսալլոս Աելս բորդուգալցին).	1448
Վալարի Վլսոյ կղզիք (Վնտոն Աուլի գենուացին).	1449
Վուինէայի ափունքը (Քովչաննես Վանդարէմ ու Պիետրոս Լագովար բորդուգալցիք).	1471
Վոնկոյ (Տիեկոյ Վամ բորդուգալցին).	1484
Վարեյուսոյ Վլուխ (Տիաս բորդուգալցին).	1486
Վերիկա , Ա . Փրկիչ կղզին 11—12 հոկտեմբերին գիշերը (Վրիստա փոր Վոլոմպոս գենուացին).	1492
Վնդիլեան կղզիք (Վրիստափոր Վոլոմպոս).	1493
Վրրորդութիւն կղզի (Վրիստափոր Վոլոմպոս).	1498
Հնդկաստան , Վիլիկէի արևելեան ափունքները , Վալապարի ափունքը (Ա ասգոյ Աամա).	1498
Վերիկա , արևելեան ափունք (()յէտաև Վերիկոս Ա եսբուզէի).	1497էամ 1499
Վմազոնեաց գետ (Ա ինկենտիոս Վինխոն).	1500
Վրազիլ (Վլարէզ Վապրալ բորդուգալցին).	1500
Վոր-Վրկիր կղզին (Վորդէրէալ բորդուգալցին).	1500
Վ . Հեղինէ կղզին (Քովչաննես Աովա բորդուգալցին).	1502
Վէյլան կղզին (Ա աւրենտիոս Վլմէյտա).	1506
Վատակասգար (Վրիսդան Վունա).	1506
Վումաղրա (Վիքուէյրա բորդուգալցին).	1508
Վալագգա (Վիքուէյրա).	1508
Վոնտի կղզիք (Վպրէօ բորդուգալցին).	1511
Վոլուգգա կղզիք (Վպրէօ և Աէրրանոյ).	1511